«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Համար 22

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Բնագիտություն առարկայի շրջանակներում “Աշակերտների մոտ արժեքային համակարգերի ձևավորումը”

ԱՌԱՐԿԱ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ Գեղեցիկ Գրիգորյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Սևանի համար 3 հիմնական դպրոց

Ներածություն

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «ԲԴՃՄ», «Հասարակական գիտություններ», «ֆիզական կրթություն և անվտանգ գործունեություն», «Հայրենագիտություն» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: Այն հիմք է ապահովում միջին և ավագ դպրոցների բնագիտական առարկաների համար, ինչպես նաև առողջ, անվտանգ կենսակերպ ինտեգրվող բովանդակային ուղղությունների համար:

Առարկայի նպատակն է տարրական դպրոցում գաղափար տալ աշխարհի անբողջականության՝նրա բազմազանության և փոխկապակցվածությունների բնության, հասարակության և սոցիալ մշակութային օբյեկտների և երևույթների միասնության ամբողջական պատկերի մասին, նպաստել ձևավորելու ստեղծագործ անձ,որն ունենա էկոլոգիական մշակութաբանական գրագիտություն, մարդկանց և բնության հետ փոխհարաբերություններում դրսևորվի պատասխանատու վարքագիծ, ունենա հայրենասեր քաղաքացու մոտեցում:

Առարկան սովորողին օգնում է հասկանալ սեփական ինքնությունը՝ որպես անձ, անհատականությունը, ունենա ազգային աշխարհայացք: Կարողանա արտահայտել իր տեսակետները, քննադատաբար վերլուծի տարբեր տեսակետներ և անի դատողություններ: Ձեռք բերի փորձառություններ, որոնք կխթանեն ուսումնասիրել աշխարհը մեր երկրի տեսանկյունից: Կկիրառի ռեֆլեքսիվ մտածողություն՝ տարբեր իրավիճակներ վերլուծելու, խնդիրներ լուծելու որոշումներ կայացնելու համար: Կզարգանան բնագիտական հետազոտությունների համար անհրաժեշտ գաղափարներ, հմտություններ և սովորություններ: Կհասկանա թե գիտությունը ինչպես է ազդում մարդկանց և շրջակա միջավայրի վրա, խնայողություն կդրսևորվի բնական ռեսուրսների հանդեպ: Կկարողանան զերծ մնալ բռնությունից, կհաղթահարեն կոնֆլիկտային իրավիճակները, կսովորեն բանակցել և ընտրել խաղաղ տարբերակներ, կկարևորեն հասարակական գործընթացները և սեփական արձագանքը տվյալ երևույթի նկատմամբ: Կցուցաբերեն նվիրվածություն սոցիալական համախմբմանը՝ գնահատելով հասարակության բազմազանությունը:

Նպատակը

- Նպաստել բնապահպանական դաստիարակության ձևավորմանը,

- հայեցի մտածողության ձևավորմանը,
- առողջ ապրելակերպի դաստիարակմանը,
- անվտանգ վարքագծի դրսևորմանը,
- նպաստել գեղագիտական դաստիարակության ձևավորմանը:

Խնդիրներ

- Երեխայի սոցիալականացումը
- Ճանաչողական ակտիվության և շրջակա աշխարհի մասին գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույնության ձևավորումը
- Բազմաբնույթ կրթական գործելակերպերի զարգացումը
- Մեդիագրագիտության ձևավորումը
- Բնության, մարդկանց, հայրենիքի հանդեպ սիրո, հարգանքի և խնայող վերաբերմունքի դաստիարակությունը
- Սեփական և ուրիշի առողջության հանդեպ գիտակից և պատասխանատու վերաբերմունքը
- Անցյալի, նախնիների հանդեպ հարգանքը,պատմական և մշակութային ժառանգության պահպանության ցանկությունը

Առարկայի բովանդակությունը կառուցված է հաջորդականության և շարունակականության սկզբունքով՝ հաշվի առնելով ներառականությունը: Իրական կյանքի օրինակների և աշխարհում կատարվող փոփոխություններին պատրաստ լինելու սկզբունքով է առաջնորդվում ողջ դասընթացը:

Առարկայի բովանդակությունը ներկայացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխան, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ինքնուրույն միմյանց օգնելով կամ ուսուցչի աջակցությամբ յուրացնել նյութը: Գիտելիքների և կարողությունների զարգացմանը զուգընթաց ձևավորվում է վերաբերմունք, արժեքային համակարգ, սոցիալական հմտություններ և ստեղծագործական ունակություն:

Առարակայի բովանդակությունը կառուցվում է «ես» գաղափարի շուրջ, հետագայում ընդլայնվում են այդ շրջանակները՝ բացահայտելով անձի և այդ շրջանակների բազմաշերտ էությունը և փոխադարձ կապը՝ ինքնաճանաչումից մինչև աշխարհաճանաչողություն: Դասընթացի օգնությամբ «կառուցվում է» սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների,մտքի ու նախասիրությունների շրջանակը:

Բացի բնագավառներով պայմանավորված բովանդակությունն ու կարողությունները, ներառվում են նաև մի շարք կարևորվող բովանդակային ուղղություններ, ինչպիսիք են՝ ֆինանսական կրթություն, գենդերային հավասարություն, քաղաքացիական, էկոլոգիական կրթություն, բռնության և հալածանքի կանխարգելման և մեդիագրագիտության վերաբերյալ ուսուցում:

Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված ճանաչողության մեթոդները: Բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության ընդհանուր տան, ուսումնասիրությունը անհրաժեշտ է իրականացնել՝ ա) սովորողի շրջապատում (տուն, բնակավայր, բնական լանդշաֆտ) դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի նկարագրության,բ) սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության տեսակների իրականացման, գ) իր շրջապատը հետազոտելու տարրական կարողությունների ու դրանց վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումների կատարման ապահովման, դ) Հայաստանի բնության բազմազանության, բնական ու հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորման, ե) մայրցամաքների հայտնագործման ու հետազոտության մասին պատմությունների միջոցով:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը:

Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային

հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ: Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաների: Շատ կարևոր է ի նկատի ունենալ, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար: Դասընթացի բոլոր թեմաների ուսումնասիրության ժամանակ կարևոր է ապահովել բազմաբնույթ գործնական աշխատանքների կիրառումը:

Գլուխ 1

Ա ր ժ ե ք ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է՝

- հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ՝իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը,խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ,
- սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը,
- պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ,
- կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները,
- լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը,
- գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները,
- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում, կարողանա համագործակցել
- լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու,
- չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը,
- գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու, ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսումնասիրումը նպաստում է աշակերտի աշխարհայացքի ձևավորման առաջին քայլերի կատարմանը: Միջառարկայական կապերի հաստատման շնորհիվ առարկայի ուսուցումը օժանդակում է սովորողների անձի արժեքահամակարգի ձևավորմանը: Ուսումնասիրվող յուրաքանչյուր թեմա թույլ է տալիս սովորողներին ՝ ճանաչելու և գնահատելու իր <<ես>>-ը, սովորեցնում օրինակելի վարքագիծ: Նրանք գաղափար են կազմում իրավունքի և պարտականության մասին, ձեռք բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ տեղեկություններ և կարողություններ: Յուրացված յուրաքանչյուր գիտելիք ինքնօրինակ ուղի է դեպի

իրավական պետություն, առողջ միջավայր, հարաբերությունների ճիշտ դրսևորում և սեփական դիրքորոշման ձեռք բերում:

Այսօր երկրի վրա փոփոխությունները սրընթաց են կատարվում: Հարկավոր է երեխաների հոգու կրակն այնպես բորբոքել, որ նրանք ճիշտ ընկալեն աշխարհի փոխկապակցված համակարգը, ըմբռնեն բնության կենսաձևերի միավորվածությունը և անքակտելի կապը, մեր իրավունքը և պատասխանատվությունը, գնահատեն հանդուրժողականության, համագործակցության արժեքը, իմանան մոլորակի բնահամակարգի և պաշարների առկայությունը:

Տարրական դպրոցը լավագույն շրջանն է համագործակցության, փոխըմբռնման , մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Երեխան պետք է կարողանա սեփական գործունեությամբ տարբերակել լավն ու վատը, չարն ու բարին, իրավունքն ու պարտականությունը, ընտանիքն ու համայնքը, հանդուրժողականությունն ու խնայողությունը:

Դասվարի խնդիրը ոչ միայն աշակերտի մեջ կարողությունների և հմտությունների, այլև արժեքային համակարգի ձևավորումն ու ամրապնդումն է: Չափազանց կարևոր է թափանցել երեխայի հոգու խորքը և հասկանալ նրա զգացմունքները: Իսկ այդ զգացմունքները հարուստ են ու բազմազան, բայց դեռևս անկայուն են, երբեմն՝ հակասական: Դա բացատրվում է մի շարք պատճառներով, որոնցից կարևորագույնը ժամանակակից կյանքի բարձր զարգացած տեխնոլոգիաների և մշակույթի առկայությունն է: Մեկ օրվա ընթացքում երեխան կարող է ստանալ բարոյական տպավորությունների հսկայածավալ լիցք: Դիտված ֆիլմերի, համակարգչային խաղերի ազդեցությամբ նա կարող է դառնալ ագրեսիվ, կամակոր, շրաջապատում իրեն պահի ոչ բարեկիրթ, չզգա պատասխանատվություն իր իսկ կատարած անվայելուչ արարքի համար: Սակայն աստիճանաբար այդ արարքները գիտակցվում են և դառնում հասարակայնորեն ընդունելի, բարոյական չափանիշներին համապատասխան: Յուրաքանչյուր թեմա ուսումնասիրելիս և ուսուցանելիս ուսուցիչը պետք է դասի գլխավոր նպատակներից մեկը դարձնի յուրովի մոտեցումը յուրաքանչյուր աշակերտ-անձի նկատմամբ:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման ընթացքում օգտագործվող ուսումնական գործունեության տեսակները բազմազան են՝ զրույց, բանավեճ, քննարկումներ, դիտումներ, էքսկուրսիաներ, փորձեր: Դրանք նպաստում են նոր գաղափարների ի հայտ գալուն, աշակերտի մտահորիզոնի ընդլայնմանը, գիտելիքների ձեռքբերմանը, ինքնուրույն մտածողությանը, ճանաչողական

ունակությունների զարգացմանը և հաղորդակցական հմտությունների ձևավորմանը:

Հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների և դրանց առաջընթացի հետ կապված կատարելագործվում են դաստիարակության խնդիրները: Դրանք վերաբերում են առողջ ապրելակերպին, արժեքային համակարգի, իմացական կարողությունների ձևավորմանը, բարոյական, աշխատանքային, տնտեսական, բնապահպանական դաստիարակությանը:

Էկոլգիական կրթության հիմքերը դրվում են հիմնականում <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման ընթացքում: Այն նպաստում է աշակերտի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորմանը, էկոլոգիական վարքագծին: Էկոլոգիական դաստիարակության նպատակը երեխայի՝ բնության հետ ներդաշնակ կենսահաստատումն է վաղ տարիքից՝ նրա մեջ ձևավորելով պատասխանատվություն բնության հանդեպ: Էկոլոգիական դաստիարակության միջոցով հարկավոր է երեխայի մեջ արմատավորել մարդու և բնության փոխհարաբերությունների գիտակցումը: Աշակերտը պետք է հասկանա, որ մարդը ինչպես բնության օգտագործողն է, այնպես էլ դրա պահպանողը և հարկավոր է խնայողաբար օգտագործել բնությունը՝ մտածելով ապագայի մասին: Առարկայի դասերը կոչված են ապահովելու երեխաների գիտելիքները բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, մարդու և բնության փոխհարաբերությունների, բնական պաշարների օգտագործման եղանակների մասին: Երեխան գիտակցաբար պետք է ցանկություն ունենա պահպանելու բնությունը: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել գնահատել բնության գեղեցկությունը և հնարավորինս ստեղծագործել այդ ուղղությամբ (փոքրիկ քառատողեր, բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ, շարադրություններ, նկարներ):

Երեխան իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, և նրա առջև բացվում են բնության գեղեցկությունները: Գեղեցիկը նկատելու կարողությանը զուգընթաց հարկավոր է երեխային սովորեցնել բնության մեջ ներդաշնակության խորհուրդն ըմբռնելու արվեստը և ձգտում առաջացնել՝ չխաթարելու այն:

Շրջապատող աշխարհում գեղեցիկը նկատելու կարողությունը կարևոր նախապայման է՝ մարդու հոգևոր աշխարհի ձևավորման և զարգացման համար: Ժամանակակից կյանքի կացութաձևը, հասարակական հարաբերությունները և շրջապատող բնությունը երեխաների գեղագիտական զարգացման նախադրյալներն են: Կենդանի և անկենդան բնությունը գոյատևում և զարգանում

է բարդ օրենքներով: Հենց այդ ընթացքում է երեխայի առջև բացվում են բնության գեղեցկությունները: Նա զննում է հմայիչ բնապտկերները, արևածագն ու մայրամուտը,աստղալից երկինքը, տարվա տարբեր եղանակների գուներանգները, բուսական ու կենդանական աշխարհի փոփոխությունները և այլն:

Շրջապատող իրականության մեջ գեղեցիկը տեսնելու կարողությունը չափազան կարևոր դեր ունի մարդու հոգևոր կյանքում: Այստեղից էլ կրտսեր դպրոցի յուրաքանչյուր ուսուցչի առաջին կարևոր խնդիրներից մեկը դառնում է երեխայի մեջ գեղագիտական ընկալունակության և դիտողականության ձևավորումը, ինչը հնարավորություն է ընձեռում տեսնելու, դիտելու, ճանաչելու և ըմբռնելու իրականութըան գեղագիտական ուղվածությունը: մի դնում դպրոցականի ճանաչողական ընկալման վրա: Աշակերտի մտավոր զարգացմանը զուգահեռ ձևավորվում է երևակայությունը, մարզվում միտքը, կոփվում մարմինը՝ արթնացնելով դրական հույզեր և հաճելի զգացումներ: Բնության տեսանելի և ներթաքույց գեղեցկություններն այնպես պետք է բացահայտել որ երեխան բազում թելերով կապվի շրջակա աշխարհին և սիրի այն: Հենց այդ սերն էլ նրա մեջ ծնում է բնությունը պահպանելու ցանկություն: Լինելով բնության գրկում, աշակերտը փորձում է ինքնուրույն ուսումնասիրել տարբեր երևույթներ՝ իրեն զգալով որպես բնական աշխարհը պեղող փոքրիկ <<փորձագետ>>: Դժվարանալու դեպքում դիմում է ընկերներին և ուսուցչին: Դրսևորվում են համագործակցելու և հաղորդակցվելու պատրաստակամությունը և այլ անձնային որակներ: Աշակերտի մեջ ծնվում են բնապահպանական-հայրենասիրական մղումներ և գործնական քայլերի պատրաստակամություն՝ մասնակցություն ծառատնկման, շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներին, օգնություն թևավոր բարեկամներին, սենըակալին բույսերի խնամք, աշխատանք դպրոցամերձ հողամասում, բնապահպանական թեմաներով պաստառների ձևավորում և այլն: Արդյունքում զարգանում են ստեղծագործելու, ինքնուրույն և խմբային գործունեություն ծավալելու կարողությունները:

Գլուխ 2

ԱՌԱՐԿԱՅԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կրտսեր դպրոցում ուսուցումը պետք է նպաստի համակողմանի զարգանալու դաստիարակությանը: Հանրակրթական պետական չափորոշիչների <<Արժեքային համակարգի>> բաղադրիչում սովորողների գեղագիտական դաստիարակությանն ուղղված պահանջներն են.

Ձևավորել անձ և քաղաքացի, որը՝

- կարևորի բնության գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը
- գնահատի սիրի և հոգատարություն ցուցաբերի բնության նկատմամբ,լինի գեղագիտական ընկալող
- մշտապես հոգ տանի բնության նկատմամբ՝ լինի գթասիրտ, օրինապահ արդարամիտ և բարեկիրթ:

Դասաժամերն ավելի արդյունավետ կլինեն, եթե զուգակցվեն էքուրսիաներով, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներով:
Էքսկուրսիաներն ունեն ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն: Դրանք օժանդակում են գիտելիքների ընդլայնմանը: Էքսկուրսիայի ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում բնության առարկաներն ու երևույթները տեսնել բնական միջավայրում, ընկալել բնությունը՝ որպես մեկ ամբողջություն: Աշակերտները կարողանում են կատարել դիտումներ, համեմատություններ: Նրանք սովորում են կողմնորոշվել տեղանքում, կապ են հաստատում դիտարկված բնության առարկաների և երևույթների միջև: Դիտումների հիման վրա աշակերտների մեջ ձևավորվում են կոնկրետ պատկերացումներ բնության երևույթների վերաբերյալ: Դիտումների շնորհիվ աշակերտները հնարավորություն են ստանում ձևավորել իրենց պատկերային, տրամաբանական մտածողությունը, տեսածը գրավոր և բանավոր վերարտադրելու կարողությունները:

Գլուխ 3

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնությունն անսպառ է և աշխարհի ու կյանքի վերաբերյալ բազմազան գիտելիքներ ստանալու լայն հնարավորություն է ընձեռում աշակերտին: Նրանց բնապահպանական գիտելիքներ հաղորդելու ունակություններ ու հմտություններ ձևավորելու գործընթացը ենթադրում է ուշադրության, մտածողության, կամային հատկանիշների և հոգեկան զարգացման ուղղությամբ տարվող մանրակրկիտ և

խնամքով աշխատանք: Մի շարք երևույթներ դիտելու և տարբեր առարկաներով գործողություններ կատարելու հիման վրա աշակերտների ուշադրությունը հրավիրվում է բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններին և տարբեր երևույթների պատճառահետևանքային կապերի: Զբոսանքների և էքսկուրսիաների ժամանակ անհրաժեշտ է՝

- աշակերտների ուշադրությունը հրավիրել եղանակի վրա . տարբերել բնության երևույթները, փոփոխություններն ու օրինաչափությունները,
- սեր դաստիարակել մարդկանց և բնության հանդեպ, սովորել խնամքով վերաբերվել շրջակա միջավայրին
- հիանալ տարվա եղանակների գեղեցկությամբ
- նրանց մեջ զարգացնել գեղագիտական ճաշակ և գործունեության մեջ այն արտահայտելու ձգտում (գեղարվեստական գրականության և կերպարվեստի միջոցով)
- սովորեցնել ուշադիր դիտել բնության երևույթները և դրանց միջև գտնել տրամաբանական կապեր: Բնապահպանական պարապմունքների ժամանակ ուսուցիչը ընդհանրացնում և կոնկրետացնում է երեխաների տպավորությունները՝ եղանակի փոփոխությունների, բույսերի և կենդանիների կյանքի, խնամքի և այդ ուղղությամբ մարդկանց աշխատանքի վերաբերյալ:

Բնությունը մի հրաշալի դպրոց է, որտեղ իրականացվող ուսումնական գործունեությունը դառնում է ավելի գրավիչ, հետաքրքիր՝ աշակերտներին տալով տրված թեմաներին կամ առաջադրանքներին առնչվող տեղեկություններ, արժեքավոր նյութեր, դիտարկումներ և նախագծային ուսումնասիրություններ կատարելու լայն ու բազմապիսի հնարավորություններ:

Էքսկուրսիայի ընթացքում բնությունից քաղած տվյալները՝ որպես արժեքավոր նյութեր կարելի է օգտագործել ինտեգրված դասերի ժամանակ:

Ներկայացնենք <<Գեղամա գեղեցկուհու գողտրիկ ափերով>> դաս-էքսկուրսիայի պլանավորումը:

ՆՊԱՏԱԿԸ

Բնության միջոցով արդյունավետ դարձնել դպրոցականների բնապահպանական և գեղագիտական դաստիարակության գործընթացը

բնապահպանական և գեղագիտական պահանջմունքների ձևավորում սովորողների դիտողականության, բնության հետ ներդաշանակ շփվելու և

հաղորդակցվելու, փոխօգնության և համագործակցության կարողությունների զարգացում

- բարոյագեղագիտական հատկանիշների դաստիարակում
- համակողմանի և ներդաշնակ անձնավորության ձևավորում

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ

եղանակին համապատասխան հագուստ, նկարչական պիտույքներ, գրիչ, թուղթ, հեռադիտակ, լուսանկարչական ապարատ, խոշորացույց, կողմնացույց, տուփեր, հանրագիտարան, տեղեկատու և ուսումնաօժանդակ ձեռնարկներ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

- անհրաժեշտ պարագաների ձեռքբերում
- էքսկուրսիայի ընթացքում վարքի և վարվեցողության պատշաճ կանոնների պահպանման մասին հաղորդում
- ուսումնական կենտրոնների (խմբերի) ձևավորում՝ ըստ աշակերտների նախասիրությունների
- առաջադրանքների բաշխում ուսումնական կենտրոններին

ԴԱՍ-ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՓՈՒԼԵՐԸ

1.Դիտարկման փուլ. բնությունից քաղված արդյունքների և արժեքավոր նյութերի հավաքագրում (բնության գրկում):
2.Աշխատանքների ներկայացման նախապատրաստական փուլ(դասղեկի ժամերին աշխատանքները բերել վերջնական տեսքի):
3.Ներկայացման փուլ՝ եզրափակիչ. աշխատանքների ներկայացում և մեկնաբանություններ (ինտեգրված դասերի ընթացքում կամ միջառարկայական կապերով):

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Մայրենիի կենտրոն-բանասերների խումբ

Բնագիտության կենտրոն-բնապահպանների խումբ
Մաթմատիկայի կենտրոն-մաթեմատիկների խումբ
Կերպարվեստի կենտրոն-նկարիչներ
Տեխնոլոգիայի կենտրոն-հմուտ մատկներ
Երաժշտական կենտրոն-երաժիշտներ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

Մայրենիի կենտրոն

Գրել էսսե՝ <<Գեղամա թագուհու երազանքը>> թեմայով: Այս աշխատանքը կնպաստի զարգացնել ինքնուրույն ստեղծագործական մտածողությունը և սեփական մտքերը գրավոր շարադրելու կարողությունները: Այս հմտությունները թույլ կտա աշակերտին՝ սովորել հստակ ու գրագետ ձևով ձևակերպել մտքերը, ներկայացնել ստացած տեղեկությունը, օգտագործել հիմնական հասկացությունները, բացահայտել պատճառահետևանքային կապերը, համապատասխան օրինակով, ներկայացնել փորձը, հիմնավորել եզրակացությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթական

-ձեռք կբերեն աշխարհաճանաչողական արժեք ունեցող գիտելիքներ
-կօգտագործեն գեղեցիկ ու գրագետ խոսք կառուցելու, բնությունը գեղագիտորեն նկարագրելու ունակությունները, կստեղծագործեն՝ ոգեշնչվելով բնության գեղեցկությունից:

Սեգ լեռների մեջ հպարտ ծվարել,
Երազող աչքդ հեռուն ես հառել,
Վանա ծովն ես դու գուցե երազում,
Ալեկոծվում ես,ահեղ փաթարկվում
Նոր արշալույսդ թող լույս ճառագի
Գեղամա չքնաղ հրաշք թագուհի:

հեղ.՝ դասվար Գ.Գրիգորյան

Գեղամա չքնաղ հրաշք տիրուհին
Հպարտ բազմել է լեռների գրկում,
Իսկ թերակղզիննրա թագն է անգին,որ ժառանգել է Աշոտ երկաթից
Երբ որ հանդարտ է լճի հայելին,
Երբ ալիքները խայտում են նրբին,
Ասես ադամանդ,գոհար են փայլում նրա հարթ,ողորկ մակերևույթին,
Չքնաղ է նաև նա մութ գիշերին,
Երբ լուսինը մեղմ երկնքով սահում
ՈՒ իր կաթնագույն սկավառակը
Փշրում է կարծես լճի ծփանքում:
Կենարար ջուրդ, սիրելի՝ Սևան,
Իր գիրկն է կանչում օտար, բարեկամ,
Որդիքդ էլ հեռվից դեպ քեզ ենգալիս,
Որ ոգեշնչվեն քո էներգիայից:

հեղ.՝ դասվար Գ.Գրիգորյան

-Կօգտվեն բառարաններից, լեզվի վերաբերյալ տեղեկատու և օժանդակ ձեռնարկներից
-Կհարստացնեն բառապաշարը

Զարգացնող

Կկատարելագործվեն աշակերտների՝
-լեզվական ճաշակն ու խոսքի մշակույթը
-ստեղծագործական միտքն ու երևակայությունը
-ներանձնային մտածողությունը
-գեղեցիկի զգացողությունը

Դաստիարակչական

Սովորողները ձեռք կբերեն՝
-անձնային որակներ
-բարոյակամային հատկանիշներ
-գեղագիտական ճաշակ
-բարեկիրթ հաղորդակցություն

Բնագիտության կենտրոն

Ձևավորել բնապահպանական թեմաներով պաստառներ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթական

-կծանոթանան շրջակա բնությանը

-դիտումների միջոցով կխորացնեն բնագիտական գիտելիքները

-սեփական փորձառությամբ ձեռք բերած գիտելիքների հիման վրա կձևավորեն բնապահպանական պաստառներ՝ պահպանելով դրանց գեղագիտական գրավչությունն ու հուզական հագեցվածությունը

-կուսումնասիրեն <<Կարմիր գիրքը>>՝ լճում անհետացման եզրին կանգնած ձկների ու բույսերի մասին տեղեկություններ հավաքելու նպատակով

-կծանոթանան բնապահպանական հիմնախնդիրներին, լճի էկոլոգիական վիճակին (որսագողություն, աղտոտում, ափամերձ անտառի հատում և այլն):

Զարգացնող

Կզարգանան աշակերտների՝

-ակնառու-պատկերավոր, ստեղծագործական և տարածական մտածողությունը, դիտունակությունն ու երևակայությունը, աշխատասիրությունն ու նպատակասլացությունը

-համագործակցային և հաղորդակցական կարողությունները

-գեղեցիկի զգացողությունը

Դաստիարակչական

Կձևավորվեն՝

-սեր և հոգատարություն բնության նկատմամբ

-գեղագիտական ճաշակ

-բարոյագեղագիտական հատկանիշներ

Մաթեմատիկայի կենտրոն

Կազմել լճում ապրող ձկների անձնագրեր (կենսագրական բանաստեղծություններ):

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթական

-Կծանոթանան լճի կենդանաբանական և բուսական աշխարհին:

-Կուսումնասիրեն ափամերձ վայրում աճող ծառատեսակները:

-Կմշակեն բնագիտական բնույթի տեղեկությունները թվերով և փաստերով ներկայացնելու հմտություններն ու կարողությունները:

-Կկատարեն հաշվարկներ:

-Կհարստացնեն ճանաչողական գործունեության սեփական փորձը

Զարգացնող

-Կզարգանան սովորողների՝

-տարածապատկերային, ստեղծագործական մտածողությունը

-համագործակցային և հաղորդակցական կարողություններն ու հմտությունները:

-բնության գեղցկություններն ընկալելու ունակությունը

-երևակայությունն ու մտքի ճկունությունը

Դաստիարակչական

Կձևավորվեն՝

-անձնային որակներ

-բարոյակամային հատկանիշներ

-գեղագիտական ճաշակ

-սեր և հոգատարություն բնության նկատմամբ

Կերպարվեստի կենտրոն

Թեմատիկ ստեղծագործական աշխատանք <<Սևանի ափին>>

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթական

-Աշակերտները կուսումնասիրեն լճի գեղեցիկ տեսարանները

-Դիտումների և ստացած տպավորությունների հիման վրա կստեղծեն թեմատիկ նկարներ,որտեղ կզարգացնեն լուսաստվերի,գույների, տոների ճիշտ

հարաբերակցությունը հաղորդելու, ինքնուրույն կոմպոզիցիա ստեղծելու ունակությունները
-Կկարողանան թեմատիկ ստեղծագործական աշխատանքներում ճշտորեն պատկերել առարկաների համաչափությունները, կառուցվածքը, տարածական դիրքերը
-Կօգտագործեն նկարը՝ որպես արտահայտման և ճանաչողական միջոց
-Կվերտադրեն իրենց ստեղծած նկարի բովանդակությունը,տրամադրությունը:

Զարգացնող

Կկատարելագործվեն սովորողների՝ տարածապատկերային մտածողությունը, երևակայությունը
-գունազգացողությունը, դիտողականությունը
-ստեղծած նկարների բովանդակությունը գեղագիտական վերարտադրելու, ինքնուրույն,ստեղծագործաբար աշխատելու, գեղեցիկը նկատելու և գնահատելու ունակությունները

Դաստիարակչական

Կձևավորվեն՝
-գեղագիտական ճաշակ
-հոգևոր արժեքները գնահատելու կարողություն
-սեր արվեստի ստեղծագործությունների հանդեպ

Տեխնոլոգիայի կենտրոն

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթական

-աշակերտները կծանոթանան լճի բնական հարստությանը
-կկարողանան ինքնուրույն ստեղծել կոմպոզիցիաներ
-բնական նյութերով (խեցիներ, կոներ, քարեր) կպատրաստեն տարբեր աշխատանքներ:
-նորովի կգնահատեն իրենց շրջապատող աշխարհը

Զարգացնող

Կզարգանան՝ ձեռնարվեստը՝ ձեռքի հմուտ շարժումների կոորդինացման կարողությունները, մոտորիկան
-աշխատանքային հմտություններն ու գործնական կարողությունները
-գեղեցիկի զգացողությունը
-երևակայությունը, պատկերացումները, բազմաշնորհությունն ու հնարամտությունը

Դաստիարակչական
Կձևավորվեն՝
-սեր արվեստի ստեղծագործության նկատմամբ
-գեղագիտական ճաշակ
-աշխատանքի արդյունքին խնամքով վերաբերվելու սովորույթ
-կամային հատկանիշներ
-հոգևոր արժեքներ

Երաժշտական կենտրոն

կազմակերպել փոքրիկ համերգ Սևանին նվիրված ստեղծագործություններով

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուսուցողական
-աշակերտները ունկնդիր կլինեն հոգեհարազատ երաժշտության՝ մտորելով իրենց գեղեցկուհու մասին
-հանդես կգան իրենց սովորած երգերով՝ համադրելով պարային շարժումները, նվագը, իմպրովիզացիան
-կձայնագրեն ալիքների ձայները
-երաժշտության միջոցով հաղորդակից կդառնան գեղեցիկին ու բարուն

Զարգացնող
Կզարգանան երեխաների՝
-երաժշտական ընդունակությունները, լսողությունը
-հուզական-հոգևոր ներաշխարհը
-ստեղծագործական մտածողությունը, ինքնագործունեությունը
-միմյանց հետ համագործակցելու և հաղորդակցվելու կարողությունները

Դաստիարակչական

Սովորողները ձեռք կբերեն՝

-գեղագիտական-գեղարվեստական ճաշակ

-սեր երաժշտության և արվեստի հանդեպ

-հոգևոր արժեքները գնահատելու կարողություն

-կձևավորվեն որպես համակողմանի և ներդաշնակ զարգացած անհատներ:

<<Արժեքային համակարգ>> բաղադրիչով նախատեսված՝ սովորողների անձնային որակների ձևավորմանն ուղղված բազում խնդիրներ լուծվում են աշակերտների ստեղծագործական-հետազոտական նմանատիպ աշխատանքների շնորհիվ: Ցանկալի է նաև ծնողների մասնակցությունը:

Գլուխ 4

ՀԱՅԵՑԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի չափորոշչային պահանջներն այնիպիսին են, որ դաստիարակվի սերունդ, որը տիրապետելով գիտելիքների որոշակի պաշարի, ունենա ազգային նկարագիր, կարողություններ ու հմտություններ՝ կյանքում դրսևորվելու համար:

Դասվարը պատասխանատու է յուրաքանչյուր երեխայի ճակատագրի համար և պարտավոր է նրան դաստիարակել որպես հայ մարդ՝ հայրենի բնության, շրջապատի նկատմամբ սրտացավ ու հոգատար վերաբերմունքով: Առարկայի ուսուցումն այնպես պետք է կազմակերպվի, որ աշակերտին ազգային արժանապատվության ոգով դաստիարակվելու հնարավորություն ընձեռի:

Հայրենասիրությունն սկսվում է հարազատ տնից ու դպրոցից, բակից ու ընկերներից, ծննդավայրից ու հայրենի բնությունից: Երեխան արդեն գիտակցում է որ մեր բնօրրանը Հայաստանն է, ուր ապրում ենք մենք և պետք է ապրեն մեր սերունդները: Հայրենիքին նվիրված յուրաքանչյուր թեմա ուղեկցվում է պատմական նյութերով: Հատկանշական են ազգային խորհրդանիշներին նվիրված նյութերը, որոնք ունեն ճանաչողական մեծ նշանակություն: Դրանք երեխաներին մղում են պրպտելու, գտնելու նորանոր տեղեկություններ, ընդլայնում են աշակերտի պատկերացումները հայրենի երկրի, քաղաքների ու գյուղերի, լեռների

ու լճերի, հայրենի բնաշխարհի մասին: Կազմում են տոհմածառեր, գրի առնում գերդաստանի վերաբերյալ տեղեկություններ, խմբագրում են սեփական <<Կարմիր գրքերը>>:

Ուսումնառության արդյունքում հայրենիքի նկատմամբ սիրո կրակը պետք է միշտ վառ պահել աշակերտի հոգում:

Հայկ նահապետից նորօրյա Արցախ
Անցել ես արդեն բազում ճանապարհ,
Յուր որդիներիդ ցավով միշտ ապրել
Արարել ես միշտ ու հարատևել:
Սասնա մեծ երկի՛ր ,
Տու՛ր ուժ ու հավատ,
Անպարտ որ մնա
Նոր հողս ազատ:

(հեղ. դասվար՝ Գ.Գրիգորյան)

Հայրենի՛ք,
Անունդ տալիս՝
Յուրաքանչյուր ոք ուժ է ստանում
Րոպեն իր կյանքի ճիշտ գնահատում՝
Եռանդով, ուժով աշխարհ արարում:
Նահրյան երկի՛ր, հայրենիք հզո՛ր,
Իրո՛ք կծաղկես , կհառնես նորեն՝
Քանզի որդիքդ դեպ քեզ կդառնան:

(հեղ. դասվար՝ Գ.Գրիգորյան)

Գլուխ 5

ԱՆՎՏԱՆԳ ՎԱՐՔԱԳԾԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ

Շրջապատը ճանաչելը կարևոր ու անհրաժեշտ պայման է երեխայի զարգացման և անվտանգ ապրելու համար: Կրտսեր դպրոցականները փորձում են ինքնուրույնություն և հետաքրքրասիրություն դրսևորել շրջապատում: Երբեմն

տարիքը և փորձի պակասը թույլ չեն տալիս, որպեսզի երեխան կարողանա գնահատել վտանգները և խուսափել դրանցից, ինչը և հաճախ պատճառ է դառնում դժբախտ պատահարների:

Համապատասխան թեմաների ընթացքում երեխայի գիտակցությանը պետք է հասցնել, թե ինչպես կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում:Հրդեհի, երկրաշարժի, ջրհեղեղի, ավտովթարի ժամանակ փրկության հիմնական նախապայմանը ճիշտ պահվածք դրսևորելն է:

Նման իրավիճակներում հատկապես առաջնահերթ կարևորություն ունեն վախի հաղթահարումը և բնազդի փոխարեն բանականությամբ առաջնորդվելը: Եթե մեծահասակն անմիջապես խուճապի է մատնվում, ապա երեխան առաջին պահին բնազդով մտածում է թաքնվել ու չտեսնել վտանգը:

Այդ ժամանակ նրանք թաքնվում են և հայտնաբերելն ու փրկելը շատ դժվար է դառնում: Նման իրավիճակներում խիստ կարևոր են երեխաների համար պաշտպանության պարզ և մատչելի համակարգի մշակումը և այդ մասին նրանց իրազեկումը: Երեխաներին պետք է ծանոթացնել տարբեր իրավիճակներին, դրանց վտանգավոր հետևանքներին: Բացատրել, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ սխալ վարքը, ինչպես շրջանցել վտանգները:Երեխաների անվտանգ վարքագիծ մշակելու գլխավոր միջոցառումներից են խաղերը: Գործնական իրավիճակների օգնությամբ ուսուցանվում են անվտանգության կանոնները:

Այսօր բոլորս ենք պարտավոր անվտանգ և ապահով դարձնել մեր երեխաների կյանքը և նրանց դաստիարակել որպես նոր՝ անվտանգ աշխարհի կառուցողները:

Գլուխ 6

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ

Առողջ մարդը բնության ամենաթանկ ստեղծագործությունն է:

Թոմաս Քարլեյլ

Բոլոր ժամանակներում էլ կարևորվել է մարդու առողջության և առողջ ապրելակերպի խնդիրը: Մեր օրերում այն խիստ արդիական է, եթե նկատի ունենանք առաջարկվող սննդամթերքի բազմազանությունը, երբեմն էլ այդ սննդի ոչ օգտակար, որոշ դեպքերում նաև վնասակար լինելը: Ճարպերով հարուստ սնունդը, նստակյաց կյանքը նախապայման են զանազան հիվանդությունների:

Այսօրվա սնունդը պարունակում է մեծ քանակությամբ հավելումներ,որոնք խիստ վնասակար են առողջությանը:

Հարկավոր է աշակերտի գիտակցության մեջ ճիշտ մոտեցում ձևավորել էկոլոգիապես մաքուր սննդի վերաբերյալ և սեր առաջացնել բանջարեղենի, մրգերի և ընդհանրապես բնական սննդի նկատմամբ:

Հին իմաստությունն ասում է. <<Լավ է պաշտպանվել, քան բուժվել>>:

Մաքուր օդը, ամենօրյա մարմնամարզությունը, արևի և ջրի խելամիտ օգտագործումը ևս նպաստում են առողջ ապրելակերպին: Առարկայի համապատասխան թեմատիկ շարքի դասանյութերը երեխայի ֆիզիկական և նյարդա-հոգեբանական ներդաշնակ զարգացման համար կարևոր նախապայման են: Ձևավորվում են հիգիենիկ կարողություններ, օրվա ռեժիմի հետևողականություն: Արդյունքում երեխայի մեջ դաստիարակվում է ֆիզիկական այնպիսի կարևոր որակ, ինչպիսին դիմացկունությունն է:

Բարձրանում է օրգանիզմի կենսագործունեության աստիճանը:

<<Առողջությունը դեռ ամեն ինչ չէ, բայց առանց դրա ամեն բան ոչինչ է>>:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասընթացն ընդգրկում է բազմազան նախագիտելիքներ: Ուսուցման հմուտ կազմակերպումը ուսուցչին հնարավորություն է տալիս զարգացնելու իր սաների մտածողությունը, խոսքը, դիտողականությունը, կամքը, զգացմունքները, ճանաչողական հետաքրքրությունները, ունակությունները:

Աշխատանքս ամփոփում եմ առարկային նվիրված աքրոստիքոսով:

Ես մի մասնիկն եմ
Սուրբ, հնամենի,
Եղեռնազարկ, տանջված՝
Վերքերով լեցուն իմ փոքրիկ հողի:

Շուրջբոլորը մեր
Ն **ր**անք են հիմա , ովքեր
Ջանացել ու պայքարել են

Ավեր ու լքված մեր տունը տեսնել;
Կյանքի պիտ կոչենք բազում երազներ
Արդար, ճիշտ, շիտակ թե որ միշտ գործենք:

Անաղարտ, մաքուր մեր լեզուն պահենք
Շրջապատում լավ օրինակ լինենք:
Խոստանում ենք ձեզ՝
Ազնիվ մեծանալ,
Րոպեի գինը միշտ գնահատել,
Հոգատար, բարի եթե մենք լինենք
Ընդմիշտ հատուցված ու խաղաղ կապրենք...

Հեղ. ՝ Գ.Գրիգորյան

Օգտագործված գրականություն:

1. <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի տարրական դպրոցի չափորոշիչ և ծրագիր
2. Ն.Տողանյան, Ա.Գյուլբուդաղյան, Ես և շրջակա աշխարհը ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան <<Մանմար>> 2013 թ.
3. Նախաշավիղ 2010 հ.8
4. Նախաշավիղ 2011 հ.2
5. Անվտանգ վարքագծի դաստիարակում, մեթոդական ուղեցույց. Հայկական կարմիր խաչի ընկերություն
6. Ճանաչողական ուղեցույց <<Սևան>> ազգային պարկ <<Աջակցության բարեփոխումներ>>,Երևան 2005թ.
7. Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ, ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2002թ.
8. И.Велек, Что должен знать и уметь юнный защитник природы, Москва.1985г.
9. И.Голубев и др., Окружающая среда и её охрана.Книга для учителя, Москва 1985г.